ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի մարտի 5 թիվ 69 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԵՂԻՇԵ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասով, 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ հոդվածով, 226-րդ հոդվածով, 227-րդ հոդվածով, 228-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց» /այսուհետ՝ Դպրոց/ ՊՈԱԿ-ի տնօրեն /այսուհետ՝ Տնօրեն/ Եղիշե Անտոնյանի կողմից 2026թ-ի փետրվարի 26-ին ներկայացրած բացատրագիրը այն մասին, որ 2026թ. փետրվարի 5-ին դպրոցում տեղի ունեցած միջադեպի մասին /դասընկերները ծեծել են Գ.Մադինյանին՝ պատճառելով մարմնական վնասվածք/ սահմանված կարգով չի տեղեկացրել ՀՀ ՆԳՆ ոստիկանություն, ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ, ուստի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Եղիշե Անտոնյանին հայտարարել նկատողություն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու հիմքով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում Ե. Անտոնյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 3/5/2026 15:49:21 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. մարտի
ք.Աշտարակ